

Ո Ռ Ի Ս Ս Զ Լ Ս Գ Պ Դ Ս Զ Ե Ր

դ. ԼԷՕ (Առաքել Բաքախանեանց)

Յայտնի դէմքերից մէկը, ծնունդ է Շուշի քաղաքում 1860 թ. ապրիլ 12-ին: Նրա հայրը դերձակ է եղած իսկ յետոյ էլ եկեղեցում ժամհար: Մանկութիւնից ուսել է ոմն Ամիրի մօտ, իսկ 1870 թ. մտել Ղարաբաղի թեմական դպր. որ եւ աւարտել է 1874 թ. (Այդ ժամանակ վերջինը Դ. դասարանն էր): 1874 թ. մտել է Շուշու քաղաքային Ուսումնարան եւ վերջացնելով՝ Նօտարի մօտ գրագրի պաշտօնով ծառայելով, անցել է հեռագրական ծառայութեան, որ եւ վարել է մինչեւ 1893 թ.: Թողնելով այդ պաշտօնն էլ, նա գնում է Բագու, որտեղ «Արօր» տպարանի կառավարիչ է նշանակւում: 1895 թ. հրաւէր է ստանում «Մշակ»-ի խմբագրութիւնից իբրեւ մշակական աշխատակից եւ ծառայող, որ եւ յանձն է առնում եւ ցայսօր վարում է նոյն պաշտօնը: Լէօ՛ի գրական գործնէութիւնն սկսւում է 1872 թ. թղթակցութիւններով եւ նման յօդուածներով, իսկ նրա բանասիրական յօդուածներն երեւում են 1882 թ.: Առաջին բանասիրական յօդուածը գրած է Հայկունու դէմ, (այժմ Նղիշէ ք. Գեղամեանց—Բագու): Բացի այս, 1877 թ. նա գրել է նաեւ ռսերէն, «Կաւկաս» թերթում: Նրա վիպական գրութեանքներն երեւացել են 1885 թ.: Առաջ նրա գրութեանքներն լոյս էին տեսնում «Աղբիւր-Տարազ»ում, բայց անցնելով «Մշակ»-ի խմբագրութեան, համարեա՛ թէ ամբողջ բանասիրականներն նրան են պատկանում. տպուել են նրա մի քանի աշխատութիւններն շարունակաբար, ինչպէս «Մելիքի Աղջիկը» պատմ. վէպը, «Հայկական Տպագրութեան» առաջին մասը, «Յովսէփ Արղութեան Երկայնաբաղուկ» կաթ. կենսագրականն եւ այլն, որոնք լոյս են տեսել նաեւ առանձին գրքերով: Նրա առաջին վէպերը, ինչպէս օրինակ «Ծայրեր», «Կորածներ» եւ այլն ժողովրդական խաւերից են առած, բայց նա դոցա հետ գրել է նաեւ պատմ. վէպեր, ինչպէս վեր յիշածներից երեւում է, եւ «Վահան Մամիկոնեան», ինչ վերաբերում է «Հայկական Տպագրութիւն», «Յովսէփ Արղ. Երկ. կթ. Կենսագրութիւնը», «Ստեփանոս Նաղարեանց» գրքերի, գրանք տպագրութեան ծագումից սկսած մեր անցեալ եւ այս դարերի գրական վերածնութեան, քաղաքական կեանքի պատմական յիշատակարաններն են, որոնք ի մի ժողովուած յիրաւի կարեւոր եւ լուրջ աշխատութեանց

մի ժողովածու են կազմում : Լէօ'ն աշխատակցել է նաեւ «Հանդէս գրակ. եւ պատմ. » եւ «Մուրճ»ին : Վերջինումս նա աւելի մեծ տեղ ստացաւ այն օրից , երբ Ա. Արասխանեանից Կրասիլնիկեանցին անցաւ , որի հրաւիրմամբ Լէօ'ն կարգուեցաւ խմբագրութեան աշխատակից - անդամ , որ եւ շարունակուում է ցարդ : Շուտով լոյս կը տեսնէ նրա մի ուրիշ աշխատութիւնը «Գրիգոր Արծրունի» խորագրով , որը նոյնպէս մի քանի մասերից կը լինի բաղկացած :

Ե. ՍԱՐԳՍԵԱՆ ԼԵՒՈՆ

Այժմեան խմբագիր «Մուրճ» ամսագրի , ծն. Գողթան գաւառի (Աղուլիսի) Յըզնա (Չանանար) գիւղում 1862 թ. հոկտ. 20-ին , Սկզբնական կրթութիւնը ստացել է նոյն գիւղի ծխական ուսումնարանում , իսկ 1873 թ. Մոսկուայի Լազարեան ձեմարանում , որտեղ աւարտելով ուսման ընթացքը , 1884 թ. մտել է Մոսկուայի Համալսարանի բնագիտական բաժինը եւ աւարտել 1888 թ. Կանդիդատի աստիճանով : Աւարտելուց յետոյ ճանապարհորդել է Թուրքաց Հայաստանում , որի արգիւնքն է «Այց Թուրքաց Հայաստանի» գիրքը : 1889/90 ճեմ. տարին հրաւիրուեցաւ Տփլիս բնական գիտութիւններ աւանդելու Ներսիսեան եւ օրիորդաց Գայիանեան ուսումնարաններում եւ հէնց 1890 թ. էլ ընտրուեցաւ Երեւանի թեմ. դպր. տեսուչ , սակայն հանգուցեալ Մաւկար կաթողիկոսը չը հաստատեց : 1892/94 թ. վարել է Շուշու թեմ. դպր. տեսուչի պաշտօնը , որտեղից հրաժարուելով , ընտրուեցաւ Ներս. դպր. տեսուչ , սակայն դարձեալ չը հաստատուելով , ընդունեց Լազարեան ձեմարանի (Մոսկուա) հրաւերը եւ 1895 թ. այնտեղ էր : Մուրճի նորակազմ խմբագրութիւնն , սրան էլ հրաւիրեց իբրեւ աշխատակից անդամ , բայց երբ Կրասիլնիկեանն այլ եւս չը կամեցաւ Մուրճ'ի խմբագիր-հրատ. լինելու պատիւը , սա Մոսկուաբնակ հարուստ Պողոսեանի հետ գնեց Մուրճը եւ սկսեց հրատարակել : Լ. Սարգսեանը, ուսանողութիւնից է երեւացել գրական ասպարիզում , յօդուածներ եւ թղթակցութիւններ գրելով Մ. Փօրթուգալեանի «Արմէնիա» (Մարտէյլ) եւ «Մըշակ» թերթերին , իսկ 1889 թ. առանձնապէս Մշակում եւ Մուրճում մըն է գրել : Իսկ վերջերս 'ի հարկէ նրա բոլոր յօդուածներն էլ զետեղուած են Մուրճի մէջ , նրա առաջին գրքով լոյս տեսած աշխատութիւններն են ա. «Այց Թուրքաց Հայաստանի» եւ ք. «Ժողովրդի կըրթութիւնը մեղանում» :

ՀԱՅԿ ՏԻՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ